

Նիւ ձըրզի նունիքն Սիթիի Հայ Առաքելական Սուրբ Խաչ Եկեղեցւոյ Տարեկան ընդհանուր ժողովին

Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ, 1953 Յունվար 18 Կիրակի կեսօրէ վերջ, ժամը 2.30-ին, նոր Հայ Կեդրոնի սրահի մէջ, ներկայ էին մօտ 60 անձիր։  
1.- Հոգաբարձութեան Ատենապետ, Պր. Ետուարդ Թռնամեանը բացաւ ժողովը։ բացադրեցլով ժողովի բնոյթը։ Մնայուն Ատենապետ ընտրուեցաւ ճնշիչ մեծամասնութեան կողմէ եւ գաղտնի քուէով, Պր. Տիգրան Սիմսարեանը, եւ Պր. Գէորգ Պէրպէրեանը նշանակուեցաւ որպէս Ատենապպիր։ Ժողովի հոգեւոր բացումը կատարեց Եկեղեցւոյ դպրապետ Պ. Խոսրով Համամճեանի կողմէ։ Հովիւ Կարդապետ Հ. Խնթոյեանի բացակայութեան, վերջոյս գերեզմանոց երթալու պատճառաւ։

Հովիւ վերադարձին, որը նաեւ իպաշտօնէ օրուան ժողովի նախագահն էր, մեզմէ յաւէտ բաժնուած ողբացեալ Պր. Խորէն Շահրազեանի Համար հոգւոց կարդաց ժողովականներու յարգանքի մասնակցութեամբ։

2.- 1952 տարուան ընդհանուր ժողովի տեղեկագրութիւնը կարդաց Պր. Արմենակ Մուրօնեան, իր պատրաստածը լինելուն որպէս անցեալ տարուայ Ատենապպիր, եւ Պր. Հայկ Սիմսարեանի առաջարկով ժողովականները իրենց գնահատանգի քուէն տուին իր լաւագոյն տեղեկագրութեան պատրաստութեան Համար։

3.- Սուրբ Խաչ Եկեղեցւոյ 1952 տարուան ճեղաբարձութեան տեղեկագրութիւնը կարդաց Պր. Նշան Խոթանպուլեան, ուր կը նշուէր թէ նոյն շըջանի հոգաբարձական կազմը եղած է, Պարոնայք, Հոգելոյս, Խորէն Շահրազեանը, Ատենապետ, Եղուարդ Թռնամեանը, փոխ Ատենապպիր։ Նշան Խոթանպուլեան, Ատենապպիր։ Սիհրան Նագաշեան, փոխ Ատենապպիր։ Տիգրան Զօփուրեան, Գանձապահ։ Եղուարդ Հէքիմեան փոխ Գանձապահ։ Եւ խորհրդականներ, Գառնիկ Շէնլուկեան։ Մկրտիչ Եւ Յարութիւն Սապոնճեան։

Տ Ա Ն - Զ - Ն - Ա - Խ - Ո - Ե Ս Բ Ե Ր

Ժ ո դ ո Վ ը դ ա յ ի ն լ ա բ ա բ ե ր ո ւ թ ե ա ն - Յ ա ր ո ւ թ ի ւ ն Ս ա պ ո ն ճ - ե ա ն . . . : Շ ի ն ո ւ թ ե ա ն ց պ ա հ պ ա ն մ ա ն . . . Զ օ փ ո ւ ր ե ա ն , Ն ա գ ա շ ե ա ն ե ւ Թ ռ ն ա մ ե ա ն :

Հ ա յ Ե կ ե ղ ե ց ա կ ա ն Ե ր ի տ ա ս ս ա ր դ ա կ ա ն կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ ե ա ն - Մ կ ր տ ի չ ե ա ն ե ւ Շ է ն լ ո ւ կ ե ա ն :

Ա ւ ա ն դ ա պ ա հ - Գ ա ր ա կ է զ ե ա ն , Պ է ն տ է ե ա ն , Զ օ փ ո ւ ր ե ա ն ք ե ւ Խ ա թ ո ւ ն ա կ ե ա ն :

Դ պ ր ա ց դ ա ս ի ե ր գ չ ա խ ու մ բ ի , Հ է ք ի մ ե ա ն ե ւ Զ օ փ ո ւ ր ե ա ն :

Կ ի ր ա կ ն օ ք ի ա լ Դ պ ր ո ց ի , Ն ա գ ա շ ե ա ն , Շ է ն լ ո ւ կ ե ա ն ե ւ Մ կ ր տ ի չ ե ա ն :

Տեղեկագրութիւնը կը շարունակէր արձանագրելու թէ կանոնաւոր կերպով 16 ժողովներ տեղի ունեցած են։ թէ Հայր Մամիկոնեանի հրաժարումէն վերջ, տարւոյն Յունվարէն, Հոգաբարձութիւնը ջանք թափած է Եկեղեցին օժտել նոր Հովիւ ով մը եւ այդ մասին դիմում կատարած է Առաջնորդ Հօր, որի շնորհիւ վերջապէս ունեցած է Եկեղեցին իր նոր հովիւը, յանձինս Հմաեակ Կարդապետ Խնթոյեանի։ Տեղեկագիրը շնորհակալութիւն կը յայտնէր Ուրարակիր-Լուսարար Պր. Խաթունիկեանի Դպրապետ Համամճեանի։ Եկեղեցասէր տիկնանց եւ այլոց։

Թթ. II.

Գր. IV.

- Տեղեկագիրը կը ցուցնէր թէ նոյն տպրւոյ Ատենապետ ողբացեալ Խորէն Շահպազեանի կողմէ ժամանակին լուր տրուած է թէ, Սիթի Դատրոնի շէնքը գընուած է կանխավճարով մը, իսկ Մայիս 14-ին 5000 Տոլար եւս յատկացուած է եւ Վերջապէս ամբողջ շէնքը գնուած է: Այս առթիւ պուտնէի հաւասարման համար ջանք կատարուած է Հոգաբարձութեան կողմէ հետեւեալ ձեւերով ալ...
- Ա. Պր. Շահնազարեանը իրեն յատկացուած ամսականէն հրաժարած է....
- Բ. Նոր Հովիւը յանձն առած է կարգ մը աշխատանքները կատարել անձամբ...
- Գ. Տեղեկացուած է Խաթունիկեանի թէ իր ամսավճարը կէսի պիտի իջեցուի, իսկ նա բոլորովին հրաժարած է ստանալ կամովին:
- Դ. Նոյնպէս կրճատուած է Դպրապետի ամսավճարը եւ Դպրաց դասի յատկացումը դադրեցուած է...:

Հանգուցեալ ազգային Երեսփոխան Խորէն Շահպազեանի տեղ, քուէի յաջորդ դական կարգով, ընտրուած է Պր. Յանկոր Տահինեանը, իսկ Հոգաբարձութեան բացի համար, Պր. Յարութիւն Գարակէօզեանը:

Տեղեկագրութիւնը կը հաւաստէր թէ, աշխատանքը կեղրոնացուած է նոր սերընդի Հայեցի դաստիարակութեան գործին թէ ուսանողական եւ թէ Կիրակնօրիայ դըպրոցով, ուր կը յաճախեն մօտ 80 աշակերտնեֆը, որոնց փոխադրման գործը, կամաւոր կերպով եւ անթերի կը կատարէին Պարոնայք Մկրտիչեանը, Նազաշեանը եւ Շէնլուկեանը, եւ որոնց գլխաւոր դաստիրակն էր Օր. Մէրի Նալբանդեան:

Տեղեկագրութիւնը կը շարունակէր թէ, Նոր Հովիւի մասին որոշ ըսելիքներ չունինք առ աժմ, բացի այն որ երեւոյթներէն դատելով իր պաշտօնին յարամար եւ նախանձախնդիր անձ մըն է Գեր. Վարդապետ Խնթոյեանը, եւ որը կը շանայ Եկեղեցին պայծառ պահել եւ Հովուել ժողովուրդը... Վերջ Տեղեկագրի ա.

4. Հաշուեքննիչ Մարմնոյ տեղեկագիրը կարդաց Պր. Զօփուրեանը Անգլերէնով, այս առթիւ Պր. Զագմագլեանը որպէս քննիչ յանձնախումբի անդամ մեծ գնահատանք տուաւ Պր. Զօփուրեանի կազմած եւ պահած Հաշիւներու մաքրութեան եւ ճշգրտութեան մասին ինչպէս նաև Վերյիշեալի անձնական զոհողութեանց համար:

5. Պր. Հայկ Շըխլեանը կարդաց Սրահի շինութեան տեղեկագիրը, որի համար այս յանձնախումբը մեծ գնահատանքի արժանացաւ:

Պր. Հայկ Սիմսարեանի մանրամասն եւ ճշգրիտ ու մաքուր տեղեկագրական ձեւը եւ թուերը Անգլերէնով, առանձին մաս կը կազմէ, որը խիստ գնահատուեցաւ:

6. Եկեղեցասիրացի տարեկան գործոնէութեան տեղեկագիրը կարդացուեցաւ Տիկին Հեթիմեանի կողմէն, գնահատուեցաւ. Տիկինները, որոնք կը շանան Հայ Առքելական Եկեղեցին վառ պահել իրենց նիւթական եւ բարոյական աշխատանքով:

7. Երջանիս Երեսփոխաններէն, Պր. Հայկ Շըխլեանը շրջանիս Երեսփոխանական ժողովի մասին որոշ մասեր մը կարդաց, եւ սակայն խնդրուեցաւ Պր. Տիգրան Սիմսարեանի, օրուայ Ատենապետէն, որ բացադրութիւններ տայ Երեսփոխանական ժողովի կարգ մը որոշումներու մասին, իմասնաւորի Քայ Առաքելական Եկեղեցւոյ անուան որոկման ձեւի մասին: Պր. Սիմսարեանը բացադրեց որ ժամանակէ մը իկեր Ս. Առաջնորդի կողմէ շանք կը թափուի մեր Հայ Առաքելական Եկեղեցին

Մ. Ա.

Գ. Կ.

անուանակեչել կամ ներկայացնել որպէս Հայ Աւղղափառ յոթօքտումով, փոխանակ բաւականանալու մեր սովորած դարերու ձեւին, այսինքն Հայ Առաքելական Եկեղեցի: Երեսփոխանական ժողովը ճնշիչ մեծամասնութեան ձանով որոշում անցուց որ Հին Ճեւը պահուի եւ Աւղղափառ չը գործածուի մեր Եկեղեցի անուան կապակցութեամբ, եւ ժողովը տուաւ իր բանաւոր պատճառաբանութիւնները:

Պր. Սիմսարեանը տուաւ նաեւ այլ յաւելուածական տեղեկութիւնները Երեսփոխանական ժողովի մասին, ներկայերը գնահատեցին բացադրութիւնները:

8. Կրթասիրացի տարեկան տեղեկագործ կարդացուեցաւ Տիկին Գարակէօզեանի կողմէ, պարզելով Հայ Դպրոցի նիւթական եւ կրթական վիճակը Գնահատուեցաւ:

9. Դպրաց Դասի տարեկան նիւթական եւ բարոյական վիճակի մասին գրաւոր տեղեկութիւն տրուեցաւ Պր. Զագմագլեանի կողմէ, որը բաւական աննպաստ երեւոյթ կը պարզէր, ըստ Պր. ագմագլեանի, քանի որ հաշիւները շատ խեղճուկ վիճակով պահուած է եղեր. յանձնաբարույթեցաւ որ յետ այսու աղէկ պահուի:

10. Կիրակնօրիայ Դպրոցի տարեկան տեղեկագորութիւնը տրուեցաւ Պր. Մկրտիչ-եանի կողմէ, որը խիստ գնահատուեցաւ: Տեղեկութիւնը կը պարզէր որ միջին հաշուվ տարին ամէն Կիրակի մօտ 80-ի չափ աշակերտութիւն եղած է, որոնց փոխադրութիւնը սիրով եւ անկատար յանփն առած են Պարոնայք Մկրտիչեանը, Շէնա լուկեանը նազաշեանը եւ ուրիշները. ու Հանք չեն խնայած Հայ մակտիները կապել Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ կարգերուն: Գնահատուեցաւ ծափով:

Ատենապետ Տ. Սիմսարեանը, տեղեկագորութեանց մասին կարեւոր ծանօթութիւններ եւ բացադրութիւններ տալէ յետոյ իրաւաբանակն վերլուծումներով եւ հասկացողութեամբ, ինչպէս ամէն տարի, թելադրեց որ ալ մանաւանդ Դպրաց դասի մասին ուշադիր լինեն եւ հաշուեքնիչ յանձնախումբը կազմէ Եկեղեցւոյ Հոգաբարձական կազմը եւ Հըսկէ ուղիղ կիրառման: Ընդունուեցաւ թելադրանքը:

11. Աւանդապահութեան տեղեկագիրը կարդացուեցաւ Պր. Յարութիւն Գարակէօզեանի կողմէ: Այս տեղեկագորութեանց առթիւ, Եկեղեցւոյ նիւթական եւ այլ վիճակի հարցերու առնչութեամբ, Պր. Յակիր Շահինեանը բողոքի ձայն բարձրացուց Պր. Զագմագլեանի դէմ, որը առանց հոգաբարձութեան կամ Եկեղեցւոյ ոեւէ պաշտօնէի գիտութեան, ինքնագլուխ, որոց աննպաստ գրութիւն դրկայէ Հայ ամուլին, Եկեղեցւոյ նիւթական տկարութեան մասին: Ժողովը գտաւ որ սխալ գործուած է անհատապէս Մամուլով այս կարեւոր շրջանի Եկեղեցւոյ անուանաբկութեան առնչութեամբ, որպէս պատւոյ խնդիր, եւ թելադրուեցաւ որ յետ այսու ոեւէ անհատ կամ պաշտօնիակ, ինքնագլուխ եւ անվաւեր գրութիւններ բաց չը ձգէ Հայ կամ օտար Մամուլին, քանի որ մեր վարկին դէմ եւ վնասակար է:

Պր. Զագմագլեանի բացադրութիւնները թէեւ որոշ չափի բանաւոր եւ սակայն անընդունելի գտնուեցաւ եւ ժողովը շինարար թելադրանքը ընդունեց: Այս մասին առաջարկը եկաւ Պր. Եղուարդ Աճէմեանէ, ինչ որ գնահատելի էր:

12. Առաջարկուեցաւ եւ գնահատանքի քուէ տրուեցաւ այս ժողովին իրեաած բոլոր տեղեկագրութեանց համար, թելադրուելով որ յետ այսու կանոնաւոր գրութեամբ ներկայացուելու է տեղեակագիրները, որ օրուան Ատենադպիրը կարենայիր տարեկան ժողովի ատենագրութիւնը եւ տեղեկագրութիւնը պատրաստել...:

Ո. Ա.

Գ. Ա.

12.- Շինութեանց տեղեկագրութեան առթիւ, Պր. Լութվիկ Շապրազեանը առաջար-  
կեց որ նոր սրահի արտագին մասը իրական աղիւսով ծածկուի եւ ոչ թէ արուես-  
տականով, ինչ որ աւելի պիտի արժէքաւորէ շէնքը եւ սիրուն երեւոյթ պիտի  
հանգնէ շէնքին: Այս առաջարկը մեծամասնութեամբ ընդունուեցաւ, որ Նինարար  
յանձնախումբը, Հոգաբարձութեան օգնութեամբ, կատարեն այս գործը, զանազաներէ  
ընդունելու շինութեան ծախքի հաշիւը, եւ ըստ այնմ որոշուի թէ որին տրուե-  
լու է գործը:

13. Պր. Յարութիւն Սապոնճեանը կարդաց Սրահի բացման օրուան ձեռնարկի դրա-  
մական հաշիւը, գնահատուեցաւ: Այս կարգի տեղեկագրութեանց համար, իմասնա-  
ւորի, Սրահի շինութեան յանձնախումբի համար գնահատական քուէ տրուեցաւ:

Այս առթիւ, Պր. ~~ակոք~~ Շահինեանը, առաջարկ բերաւ որ նոր Հոգաբարձու-  
թիւնը եթէ յարմար տեսնայ կարենայ լուծել հին շինարարութեան յանձնախումբը  
եւ կազմել նորը եթէ հարկ տեսնայ: Առաջարկը ընդունուեցաւ:

14. Առաջարկուեցաւ որ յարմար է եւ հարկ որ Հոգաբարձութիւնը թեթեւ ճա-  
շասեղան մը սարգէ իպատիւ Նինարար եւ միւս յանձնախումբերու, որոնք իրենց  
բոլորանուէր ջանքը չեն խնաժած նոր սրահի գնման եւ նորոգման եւ ապահովա-  
պէս շարունակման: Ընդունուեցաւ առաջարկը:

15. Ընտրուեցան Ընտրութեան եւ հաշուեքննիչ յանձնախումբեր, հետեւելուներէ:  
Պարոնայք նուբար Տօրեանց Լութվիկ Շահպազեանց Արմենակ Պոկեանց  
Գրիգոր Զագմագլեան եւ Գրիգոր Պնտեէան:

Ժողովը փակուեցաւ Երեկոյ ուշ ատեն, գնահատելով Ատենապետի շատ կանոնաւոր  
կառավարումը եւ ժողովականներու ողջմտութիւնը:

Ժողովին Ատենապետ,

Միքայիլ Խանովյան  
Ցիկրան Սիմոնարեան

Ատենապիր...

Գրիգոր Ալեքսանդր  
Գ. Պէտրովեան

Տ. Գ. Սանօթութիւն... - Այս տեղեկագրութիւնը պատրաստուած է ժողովէն  
երեք ամիսներ վերջ, զանազան պատճառներով: Եթէ մոռացումներ ե-  
ղած են անուանցկամ այլ գործերու շուրջ, սրբագրուելու է ներողամտութեամբք

Ա. Գ. Մ.